



40. ՕՍԿԵՐՈՉԱՄ ՏՂԵՆ

Կէղնին-չէղնին էրկու չընկեր կէզնին,—հմալ մոտ կէզնին, իմալ օր ջիվըկ էրկու ախպեր շըն կոնա էղնի: Օրերուց օր մե Յարոն կը կարգվի,— հարսնիք կէնե, կնիկ տուն կը բերե, ին ամիս, ին սհաթ, ին գախա օր կը թըմըմի՝ կնիկ կը պարկի՝ օսկերոչամ տղե մե կը բերե, հմալ խորոտիկ, օր շուտիս-չըխմիս ինոր իշկիս:

Տղեն օր կէղնի մեկ-էրկու տարեկան՝ Յարոն կէրթա խարիբ-խուրբաթ, բալքի փարա վաստկի, բերե զտուն պահե: Հինդ տարի գընցնա վըր խարիբութենին՝ Օսկերոչամ տղեն չըմնօր կըհարցու մամուն, թե ուր պապն յո՛ւր է գացի, ե՛ր գիկա, մամ կը խաբե գտղեն՝ գացեր է ֆլան քաղաք Ստամբուլ, ուրիջ կնիկ մառի, ուրին կապրի:

Յարո չընկեր նարոն շատ նամուսով ջըհել կէղնի, ուր չընկերոջ ու ուրնե մեծերու պատիվ ուր գլխուց բանձր կը պահե, ինք լե կը կարգվի, ու էդ հինգ տարվա մեջ հեղ մե յոտք շը թալե չընկերոջ տուն, թե դուզե չընկերոջ կնկա հալն չիմնա՝ ուր պառավ մամուն: կը ճամպե, օր մարդիկ կասկած շը տանին, կնկա անուն շէղնի բերնի ծամոն, գանուն չավիրին:

Մեծորեք ըսած ին, թե կնիկ խսմի սատանա՛ է. իդա կնիկ լե սատանից պակաս շէղնի, հլա բան մե չիվել. օր մե մարդու չընկերոջ կը տեսնա՝ գիլա, օյին-զօյին կէղնի, զնարոն կը կանչե տուն, թե արի, ուր խարիբ-խուրբաթից գիր է էկի, տանե տերտրոջ կարգա. զմիտքն չիմնա: նարոն դուզե զմամ ճամպե, կնիկ կը նեղենա, դուր

օր կանխով: Չարա չէղնի, Նարոն կէրթա տուն, բարև կիտա, բարև կառնե, յանի թե նեղեցուկ է, զՕսկերոչամ տղեն կը գրկե, կը պագե, կըսե:

— Դե, իմ բերնի սրբութեան, զգիր տուր տանիմ տերտրոջ կարգա՝ զմիտքն չիմնանք:

Հմա ի՞նչ գիր, ի՞նչ բան: Նարոն ըսկի շայիչ չէնե, օր էդ կնկա միտք ծուռ է, գուզե տանե զմարդ հըտ ուր յոտաց, զՕսկերոչամ դուս կէնե՝ գնա խաղա, գնարոն տակ բարձ մե կը դնե, նստըցու, կը ծիծղա, կը կրկրա, գուն կիտա, գուն կառնե, սորա ինք լե կը նստի Նարո կուշտ, փեջ կը կպու ինոր փիջուն, զձեռ կը թալե վզով: Նարոն իմալ օձու խեթուկ, հո՛ւշտ կէղնի, շափալեղ չէ, թոփ մե դիջու կնկա քիթ-մոթին, կը թքե, թորկե կէրթա:

Օսկերոչամ տղա, դու տղա, դուս չըր գա՛ցի, պալտըվեր էր սան յետև, չըմեն բան կը տեսնա ուր աչքով, չըմեն բան կը լսե ուր անկըջով, ուր միտ կը պահե, եր պապ գա էդ չըմեն մեկիկ-մեկիկ թարիֆ էնե ինոր, թըղ էրթա չիմնա օր Օսկերոչամ տղեն էն խըղար լե պզտիկ չէ, շարագա է, գինա ինչ-ինչոց է:

Նարոն օր կէրթա՝ Օսկերոչամ տղեն սան յետևուց գելնա դուս, կը կանի մամու յառջև, կը հարցու:

— Մարե՛, հոխպեր Նարոն քըզի յորի՞ն զարկեց:

— Մարդ ընձի չը զարկեր է:

— Իմա՞լ, յորին չը տեսա՞, չը լսի՞, ես չըմ ճանչընա՞, էնի իմ պապու չընկեր Նարոն չէ՞ր:

Կնիկ կը կարմըրծեռի, կը հասնի զփետ վերցու, օր զարկե տղին, տղեն դուս կը փախնի: Դող ոռ ամոթ գընկնա կնկա ջան: Գելնա, գտղին կը բերե, կը լալուձկի, հըտ լալուն խնդիրք կէնե:

— Մեռնիմ քըզի, իմ Օսկերոչամ, քու պապ օր չիգա՝ չէղնի բան ըսի՞ս:

— Չէ՛, մարե, բան չըմ ըսի:

Կնիկ կը միամտնա:

Դու մ՛ըսի Նարոն օր գելնա Յարո տնեն, գրկեց՝ ձձում հեծնող կնիկ մե՝ կը տեսնա: Էդ կնիկ շարախոս ու ճոռթած բերան կէղնի, կըսե ուր դրկեց կնկա մե, էդ կնիկ՝ ուրիջ կնկա մե, ձենով-ձեն՝ թելից յերկեն, բերնե-բերան՝ դառնա գերան, կը ձենձընվի մըջ դեղին՝ «Յարո կնիկ սիրո՞ղ կը պահե, սիրող լե Նարո՞ն է»:

Վըր լոթ տաբուն՝ Յարոն խարիբութենեն կը դառնա գիկա տուն: Դըռ բան չը լսե՛ր է, կէրթա Նարո տեսութեն, կը նստին, կուտին,

կը խմին, կուրախնան, զմիտ ուրանց կը բերին ուրանց խաղեր ու խսեք: Յարոն՝ գելնա չիգա տուն, ձձում հեծնող ճոռթած բերան կնիկ ինոր անկաջ կը կաթըցու՝ ըջտե հմլա-հմլա բա՛ն: Յարոն կը հեռստի, կը քրպոտի, կիտա-կառնե, կնկան բան չըսե, օլոր օր կառնե ղխանջար կը հըռըփա դըխ նարոն, օր ղարկե սպանե:

Նարոն կըսե.

— Յա՛րո, խորբան, կա՛նի: Գինամ չորին իս էկի, իդա իմ վիղ, իգա քո խանջար: Մեծորեք կըսին, օր օղորդ խոսք էրեխուց ու խելըռուց կոնաս չիմնա: Ա՛խպեր, գնա քու Օսկերուչամ տղին հարցու, օր ըսեց օղորդ է, էլման արի, չըմ փախնի, ղխանջարդի շուրի բուռ զարկ մըջ իմ սրտին, ջնսատակ էրե, թե սուտ էղավ՝ գո՛ւ դինաս քու կնիկ:

Յարոն ղխանջար կը դնե գոտին, գիկա տուն, կնկան բան չըսե, չըմքի գինա, օր կնիկ խամի օղորդ չը կոնա ըսե, կառնե զՕսկերուչամ տղեն, կէրթա գետեզը, կը նստի փլի մե, գընկնա տարտածարանք մտքերու մեջ, սրտի կսկծուց գիլա, օր գիլա՝ Օսկերուչամ տղեն կը հարցու.

— Յա՛, չորի՞ գիլաս:

— Օսկերուչամ, քու միտ գիկա՞, եր նարոն էկեր էր մեր տուն:

— Հա՛, ես սան չետեն ենք պալտըվուկ:

— Է՛, ի՞նչ տեսար:

— Տեսա ու լսի,— իմ մամ կանչեր էր հոխպեր նարոն, էնի էկավ, բարև տվեց, բարև առավ, ըսեց. «Դե՛, իմ բերնի սրբութե՛ն, զգիր տու տանիմ տերտոջ՝ կարդա զմիտքն չիմնանք»: Էդ վախտ իմ մամ ընձի դուս էրեց, հմա ես մտա պալտըվա սան չետե: Տեսա բարձ մե դրեց նարո տակ, նստըցուց, ծիծղաց, կրկրաց, գուն տվեց, գուն առավ, սորա ինք լե նստավ նարո կուշտ, փեջ կպուց ինոր փիջուն, դձեռ թալեց վզով, նարոն իմալ օձու խեթուկ՝ հո՛ւշտ էղավ, շափալեղ չէ, թոփ մե չիջուց իմ մամու քիթ ու մոթին, թքեց, թորկեց գնաց:

Յարոն զՕսկերուչամ կը պադե, գելնա կէրթա մըտ նարոն:

— Նա՛րո, խո՛րբան,— կըսե,— մեղք քո՛ւմ չէ, մեղք իմ կընկա՛ն է:

Նարոն ուրախութենեն աչքերն ի լիք՝ կը հասնի, փաթվի, կը գրկե զՅարոն, պըռչ-պըռչ կը պագե, կը նստին, կուտին, կը խմին ու էդ դախից էլման չընկերութեն կէնին, մինակ Յարո կնիկ օր կը

տեսնա զնարոն, շը կոնա շիտակ ինոր յերես իշկե, ամոթու զգլուխ
կը կախե գետին: Ըշտե հմլա բա՛ն: Աստված զՕսկերոչամ տղի արև
յերկեն էնե, բարով-խերով ուր կանանչ-կարմիր կապե, ու ձրզի լե
ինոր պես շա՛տ տղեկներ տա: Ա՛մեն:

